# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2013թվականի N 15

### ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել ավագանու 2013 թվականի հունիսի 21-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Զորավան համայնքի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք նվիրելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2013թվականի N 16-Ն

### ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Զորավան համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 14-ի «Զորավան գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1. Համայնքի բյուջեի 11-1-2 ծրագրի ֆոնդային մասի պահուստային ֆոնդ 4891 հոդվածից՝ 340.0 /երեք հարյուր քառասուն հազար/ դրամ փոխանցել 05-2-1 ծրագրի նախագծահետազոտական ծախսեր 5134 հոդվածին:

2. Համայնքի բյուջեի 01-1-1 ծրագրի նախագծահետազոտական ծախսեր 5134 հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ փոխանցել 01-6-1 ծրագրի նախագծահետազոտական ծախսեր 5134 հոդվածին:

3. Համայնքի բյուջեի 04-5-1 ծրագրի նախագծահետազոտական ծախսեր 5134 հոդվածից 100.0 /հարյուր հազար/ դրամ փոխանցել 09-1-1 ծրագրի նախագծահետազոտական ծախսեր 5134 հոդվածին:

4. Համայնքի բյուջեի 11-1-2 ծրագրի ֆոնդային մասի պահուստային ֆոնդ 4891 հոդվածից 50.0 /հիսուն հազար/ դրամ փոխանցել 01-6-1 ծրագրի նախագծահետազոտական ծախսեր 5134 հոդվածին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2013թվականի N 17

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված 1-ին մասի 20-րդ կետի և 41-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Գրիգորյանի դիմումը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը նվիրել 544000 ( հինգ հարյուր քառասունչորս հազար) դրամ արժողությամբ գույք՝ գազօջախ CG 15112GW/90x60x82 և Սառնարան Hitachi R-Z 660 SLS:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ